ԼՐԱՏՈՒ

ՄԵԾԱՆՈՒՆ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Լրացավ ՍՍՀՄ և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիաների ակադեմիկոս, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անդամ, պետական էրմիտաժի դիրեկտոր, ՌՍՖՍՀ կուլտուրայի և ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ՍՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր Բորիս Բորիսովիչ Պիոտրովսկու 75-ամյակը։

Դեռևս ուսանողական տարիներին Լենինգրադի համալսարանի լեզվաբանության ու նյութական մշակույթի ֆակուլտետում աշակերտելով արևելագետ Վ. Վ. Ստրուվեին և հնագետ Ա. Ա. Միլլերին, Նիկողայոս Մառին և Հովսեփ Օրբելուն, իսկ պետական էրմիտաժում՝ եգիպտաբան Ն. Դ. Ֆլիտներին, Բ. Պիոտրովսկին վերջնականապես կողմնորոշվեց դեպի արևելագիտությունն ու հնագիտությունը։ Այդ տարիներին նրա գրած առաջին հոդվածները արծարծում են հին Եգիպտոսի պատմության ու մշակույթի մի շարք կարևոր հարցեր։

1930 թ. Բ. Պիոտրովսկին Ն. Մառի խորհրդով գործուղվում է Հայաստան և այդ թվականից նրա գիտական ճակատագիրը սերտորեն կապվում է մեր հանրապետության հետ։ Լ. Գյուզալյանի և Ա. Հաջյանի հետ նա ուսումնասիրում է Սևանի ու Առագածի կիկլոպյան ամրոցները, Հ. Օրբելու ղեկավարությամբ 1936 թ. աշխատում Ամբերդում, Կ. Ղաֆադարյանի հետ 1939 թվականից սկսում Կարմիր բլուրի պեղումները, որոնցով նա համընդհանուր ճանաչում գտավ։ Կարմիր բլուրի պեղումները նշանավորեցին Ուրարտուի հնագիտության զարգացման գիտական փուլը։ Ուրարտական հնավայրի մինչ այդ կատարված ուսումնասիրությունները Վանում, Թոփրակ-Կալեում կրել են կարճատև, ոչ սիստեմատիկ բնույթ։ Կարմիր բլուրում կատարված աշխատանքների շնորհիվ Բ. Պիոտրովսկին կարողացավ վերականգնել մ. թ. ա. VII դ. ամրոցի և քաղաքի ամբողջական պատկերը։

Ուրարտուի պատմությանն ու մշակույթին նվիրված մենագրությունները, որոնց մի մասը թարգմանված է օտար լեզուներով, Կարմիր բլուրի պեղումների հաշվետվությունները նրան ճանաչված և մեծանուն ուրարտագիտի համբավ բերեցին։ Հատկապես պետք է նշել «Վանի թագավորություն» մենագրությունը (1959 թ.), որը ցայսօր Ուրարտուի պատմության և մշակույթի լավագույն շարադրանքն է։ 1949 թ. լույս տեսած նրա «Անդրկովկասի հնագիտություն» դասախոսությունների ժողովածուն սեղանի գիրք դարձավ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի նախնադարյան պատմությամբ ու մշակույթով զբաղվողների համար։ Ուշադրության են արժանի հայ ժողովրդի ծագման և

սկյութական արվեստին ու նրա՝ հին արևելյան երկրների հետ ունեցած կապերի հարցերին նվիրված ուսումնասիրությունները։

1960-ական թվականների սկզբին Բ. Պիոտրովսկին նորից է վերադառնում եգիպտական թեմատիկային։ Ասուանի ջրամբարի կառուցման կապակցությամբ Բ. Պիոտրովսկին ընդգրկվում է եգիպտական հուշարձանների փրկման՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի ձեռնարկած աշխատանքներում և ղեկավարում սովետական հնագիտական արշավախմբի գործունեությունը Նեղոսի հովտում. դրանց արդյունքները նա ամփոփեց իր «Հին Նուբիա» գրքում։ Թութանհամոնի դամբարանի գանձերի ցուցահանդեսի կազմակերպումը Էրմիտաժում առիթ հանդիսացավ Բ. Պիոտրովսկու համար՝ նորովի լուսաբանելու հին Եգիպտոսի կապերը Նուբիայի, Կրետե-Միքենյան աշխարհի ու հին արևելյան երկրների հետ։

Բ. Պիոտրովսկին արտասահմանյան գիտական մի շարք հաստատությունների անդամ է։ Նա մեծ հաջողությամբ է ներկայացնում սովետական գիտության նվաճումները արտասահմանում՝ գիտաժողովների, ցուցահանդեսների և այլ առիթներով։ Մեծ է Բ. Պիոտրովսկու դերը հնագետ-մասնագետների պատրաստման գործում, առավելապես Հայաստանում, որտեղ նրա ավանդը հնագիտության զարգացման ասպարեզում նշանակալից է։

Սովետական գիտության ու մշակույթի առաջընթացին ցույց տված եռանդուն մասնակցության համար Բ. Պիոտրովսկին իր 75-ամյակի օրերին արժանացավ Սովետական Միության սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչմանը։ Այս առիթով մի անգամ ևս շնորհավորենք թանկագին հոբելյարին և ցանկանք նորանոր հաջողություններ՝ ի փառս սովետական գիտության։

ԲԱԲԿԵՆ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

ԳԵՎՈՐԳ ՏԻՐԱՑՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու